




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9862

Uebfue

fueufue



h. 1923

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

ՄԱՀՎԱՆ

ԲԱՏԱԼԻՈՆ

(ԿՈՄԵԴԻԱ)

891.99
Թ-71

ԵՐԵՎԱՆ
1928

01-33
11-71

u r

Handwritten signature
23.8.16/1

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

ՄԱՀՎԱՆ
ԲԱՏԱԼԻՈՆ

(ԿՈՄԵԴԻԱ)

Red stamp with Armenian text

2003

Handwritten 477

Red stamp with Armenian text

ՅԵՐԵՎԱՆ
1923

Red circular stamp
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՈՐԾԱՆԻ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՈՐԾԱՆԻ
7/3. 1922
ՍՏԱՆԲՈՒԼ

31634-47

ԽԱՂԻՆ ԱՆՁԵՐԸ

1. Վարդան Սերգեյիչ.
2. Նասադիա Սարգիսովնա (Վարդանի կինը)
3. Ժորժիկ (Սրանց վարդին, յերեսասարգ զինվորական)
4. Նիկիտա (Յերեսասարգ զինվորական, Ժորժիկի ընկերը)
5. Գրիգա (» » » »)
6. Քամարա (Ժորժիկի սիրուհին)
7. Ամալիա (Նիկիտայի սիրուհին)
8. Մաւա (Աղախին Վարդանի ճանը)

Գործողությունը—Թիֆլիսում:

Տեսարանը—մի բուռնուա ընճանիքի գահլինում:

Ժամանակը—մեծ պատերազմի ընթացքում:

14456-57-5

ՄԱՀՎԱՆ ԲԱՏԱԼԻՈՆ

1

Նասալիա Սարգիսովնա. — (Մեհալ) Ինչո՞ւ ուշացա՞վ
այս մարդը, յերբեք այսպես չեր ուշացել: (Լուսրյուն)
Ժորժիկն ել չեկավ, ու՛ֆ, ձանձրանում եմ: (Յեկարում
և բազկաքսոսի վրա յեվ փորձում է մի գիրք կարդալ, բայց
կարճ ժամանակից սրճեղում է յեվ նետում է գիրքը):
Մաշա, Մաշա:

2

Մառա. — (Մեհում է): Այստեղ եմ, Տիկին: (Մեհում է բոբիկ,
ձեռքին բռնած գուլպան):

Նասալիա. — Վազերի ծաղիկները չորանալու վրա են, յե-
րեմի մոռացել ես ջուր տալ:

Մառա. — Իսկույն, Տիկին: (Դուռ):

3

Նասալիա. — Ի՞նչ ժամանակի հասել ենք, կարդին աղա-
խին անգամ չի կարելի ճարել: (Յերբեվեկ): Ել կար-
դին ամուսին չենք փնտռում, քարը գլխին, միայն
մարդ կարողանար կարդին աղախին ունենալ:

4

Թամարա յեվ Ամալիա. — (Ներս են վազում ծիծաղելով յեվ
ցատկելով):

Քամարա,—Նատալիս Սարգիսոյնա, Մաշան առայ, վոր մենակ եք, վոչ Վարդան Սերգեյիչը տանն ե ե վոչ ել ժորժիկը:

Նասալիա.—Շատ լավ արեցիք, վոր յեկաք, մենակությունից ե ձանձրությունից քիչ եր մնում գծվել:

Ամալիա.—Բայց ուր են գնացել, Նիկիտան ել այստեղ պետք եր լիներ:

Նասալիա.—Վարդան Սերգեյիչը այսպես յերբեք չեւ ուշացել:

Քամարա.—Իրար պատահած չեն լինի, յեթե պատահելն՝ շուտով տուն կգային:

5

Մաւա.—(Մտնում ե, մի ձեռքում բռնած մի բաժակ ջուր, իսկ մյուսին՝ գեռեկս բռնած իր գուլպան, բաժակը յերկարում ե Նասալիային):

Նասալիա.—(Զայրացած) Յես չեի ջուր խնդրողը—բռնակները, ծագիկները, հասկացար, տխար:

Մաւա.—(Շփոթած՝ բաժակը արագորեն պարպում ե վագերի մեկում):

Նասալիա.—(Օրդեն նշմարած Մաւայի բոպիկ վոսքը յեզ ձեռքի գուլպան) Այդ ինչ ե:

Մաւա.—(Սվելի Եփորած՝ վաւ ե գցում բաժակը յեզ գուլպան փաթարում վզին):

Նասալիա.—Կորիք, խելացնոր, ամեն մի հիմար ինձ ե պատահում:

Մաւա.—(Փախում ե, բայց մահնկած Եփորոքյան՝ զարնվում ե պատին յեզ ապա անպարում դուռ):

6

Նասալիա.—(Դառնալով աղջիկներին) Յեթե յես իշխանություն ունենայի՝ առաջին դործս կլիներ բաց անել աղախինների հատուկ ակադեմիա: Ուրիշների ծառայելուց առաջ՝ այս տխմարները պետք ե սովորեն՝ թե ինչպես պիտի վարվել ազնվական տիկիներին հետ: Իմ կարծիքով աղախինները շատ ավելի պետք ունին կրթություն ստանալու՝ քան մենք: Վերջապես մենք ինչ կարիք ունենք կրթվելու:

Քամարա.—Մենք արդեն կրթված ենք:

Նասալիա.—Ի հարկե, ի հարկե:

7

Մաւա.—(Մտնում ե, գուլպան կազած յեզ ձեռքին բռնած սափորով ջուր):

Նասալիա.—Սրանք, սրանք, (ցույց տալով Մաւային) այս տխմարները կարիք ունին կրթվելու:

Մաւա.—(Վախից փչեւ ե մնում սափորը վաւ գցի) Չեզի համար չե, Տիկին,—ծաղիկներին, բույսերին:

Նասալիա.—(Խոժոռ հայում ե Մաւային յեզ տուռ ե տալիս իր յեռնոք):

Մաւա.—(Սկսում ե ջուր ածել քաղարների մեջ):

Ամալիա.—Յերբեմն մտածում եմ, վոր կրթված լինելը տառապանք ե:

Նասալիա.—Ճիշտ ե, աղջիկս, այս աշխարհում մեր պարտականությունները շատ ծանր են—թատրոն գնալ, կոնցերտի գնալ, հյուրեր ընդունել, այս բոլորի հա-

մապատասխան շորեր հագնել, ամեն մեկ կրթված ծանոթի համապատասխան խոսակցութեան նյութ ընտրել, վերջապես շատ ծանր պարտականություններ ունինք կատարելու այսօրվու՞մ աշխարհում:

Թամարա.— (Մինչեւ այդ մագերեք եւ հաբարում հայելու առաջ) կրթութեան մասին իմ կարծիքս բոլորովին այլ է, Նատալիա Սարգիսովնա, յես կարծում եմ, վոր կրթութեանը վնչ թե տառապանք է, այլ մի տեսակ տանջանք, վորովհետեւ...

Նասալիա.— ('Նամարեղով վոր Մաւայի ջուր ածած քաղաքների մեկից ջուր է կաթկում' կոպիս նայնով) Հիմար, ջուր է կաթկթում:

Մաւա.— (Վախեցած՝ օկում է գոգալ):

Նասալիա.— (Նոպիս ազդակով) Ի՞նչ էս ասում...

Մաւա.— Պետք է կրթվել, Տիկին:

Նասալիա.— (Լուսքունը յեւ զայրացած արհաւիրքով) Թամարա, դու չվերջացրիր քո կարծիքը կրթութեան մասին:

Թամարա.— Յես ինքս ել մոռացա թե ի՞նչ եի ասում:

Ամալիա.— Ասում եիր, վոր կրթութեանը տառապանք է, այլ մի տեսակ տանջանք:

Թամարա.— Այո, հիշեցի: Յես կրկնում եմ վոր...

(Դրսից լսվում է բալետի աղմուկ, ենզդեհ մոտենում է Մոնոմ և Ժորժիկ):

8

Ժորժիկ.— Մայրի՛կ, մայրի՛կ, (փաթաթվում է մորը) վերջապէս, վերջապէս...

Նասալիա.— Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել:

Ժորժիկ.— (Փաթաթվելով Թամարային) Վերջապէս, Թամարա, վերջապէս...

Թամարա.— Ի՞նչ է պատահել, Ժորժիկ, ասա:

Ժորժիկ.— Ո՛ր, դուք ել այստեղ եք, որդ. Ամալիա, ներեցեք. (բարեգում է) Նիկիտան շուտով այստեղ կլինի:

Ամալիա.— Բայց ասացեք թե ի՞նչ է պատահել ձեզ:

Ժորժիկ.— (Մի պահ խուսափող լուսքունից հետո՝ կանգնում է գահիցի մեջքից, սուրբ բառում, բարեւ է բռնում յեւ ծանր շեշտով) Ա...ր...ձա...նա...դր...վիցի՛...

Մաւա.— (Ուշագրււքունը դարձնելով Ժորժիկին՝ ջուրը փոխանակ վազի՝ քափում է քախկալմածի վրա):

Նասալիա.— Ի՞նչ էս անում, տխմար:

Մաւա.— (Սրափվում է յեւ շարունակում ջրի ծաղիկները):

Նասալիա.— Ժորժիկ, իմ սիրելիս, յես քեզ չհասկացա:

Թամարա.— Բացատրիր միաքդ, Ժորժիկ:

Ժորժիկ.— (Խորից լքջւոյամբ) Արձանազրկեցի... մահվան բառալիտնում...

Նասալիա.— (Վախի հիշ է արձակում յեւ քնկնում Մաւաի վրա):

Թամարա.— ('Նույնպէս):

Ամալիա.— (Քնկնելով նրան) Յէս վորի վրա ընկնեմ:

Մաւա.— կրթվածներ: (Գնում է գուրս):

9

Ժորժիկ.— (Սուրբ նոնելով) Մենք վորոշել ենք փշրել, ջարդ ու փշուր անել թշնամին:

(Նասալիա յեվ Թամարս սրափվում են)

Նասալիա.— Ժորժիկ, աղափխյակս, հորդ հողիվ աշող-
վեց քեզ թիկունքում պահել, ի՞նչպես դու այդ սար-
սափելի քայլը առիր, մահվան բառալիոն... ել չկաս
դու, կորանք... (Լաց և լինում):

Թամարս.— Յես եմ կորածը, յես: (Լաց և լինում):

Ժորժիկ.— (Սուրբ ուշադրությամբ դարձնելու նրանց արտա-
սուբեկտիվ) Զարդ ու փշուր կանենք, մեկ, յերկու,
յերեք (ոգի մեջ սուրով գլուխ է բացում) մեկ, յերկու,
յերեք...

Նասալիա.— Ժորժիկ, զավակս...

Թամարս.— Ժորժիկ, հողիս...

Ժորժիկ.— Թշնամիներ, թշնամիներ, ամեն կողմ: (Գարձ-
յալ ահավոր սպառնալիքով բարձրացնում է սուրը):

10

Մառա.— (Նեսս և մեռում, հանգիստում է սուրի բարձրացման
յեվ սուր ֆիզիկ գլորվում է գուրս):

Ժորժիկ.— (Շարունակելով) Թշնամիներ, ահա և թշնամին
(Զարնում է յերեվակայական մի մարդու: Բոլորը վախե-
ցած՝ հեռ հեռ են փախչում):

Նասալիա.— Հանդարտիր, զավակս: (Փորձում է մոտենալ,
բայց վախենում է սրից): Փառք Աստծու, թշնամիներ
չկան այստեղ:

Թամարս.— Ժորժիկ, յես եմ աղաչում քեզ:

Ժորժիկ.— (Խոթողազեմ դառնալով մորը) Յեթե չկան՝ կըս-
տեղծենք, պետք է լինին, վորպեսզի վոչնչացնենք:

Նասալիա.— Ասա, Ժորժիկ, ով մոլորեցրեց քեզ: Մահվան
բառալիոն...

Ժորժիկ.— Վոչ վոր:

Թամարս.— (Ս. մալիայից) Ի՞նչ լավ է, վոր Նիկիտան չի
արձանագրվել:

Ամալիա.— Հրաշալի է այդ:

Նասալիա.— Ասա, ով մոլորեցրեց քեզ:

Ժորժիկ.— Ասացի վոչ վոր, յես մոլորեցրի մյուսներին:
Այս հերոսության առաջին քայլը յես առի, մյուս-
ները հետևեցին ինձ:

Նասալիա.— Արձանագրվողների մեջ ել ով կա:

Ժորժիկ.— Որդ. Ամալիայի նշանածը— Նիկիտան:

Ամալիա.— (ձի է արձակում յեվ ընկնում Թամարսի վրա):

Նասալիա.— Նիկիտան:

Ժորժիկ.— Այո, ինքը՝ Նիկիտան:

Նասալիա.— Խեղճ Ամալիա, խեղճ Սննա Սիմոնովնա, ի՞նչ-
պես պետք է դիմանա իր զավակի հիմարության:

Ժորժիկ.— Հիմարության:

Ամալիա.— (Սրափվելով) Այո, հիմարության, զգվելի հի-
մարության:

Նասալիա.— Հիմարության, այո, անբուժելի հիմարու-
թյան:

Թամարս.— Տեր Աստված:

Ժորժիկ.— Սա հիմարությունն է, սա հերոսությունն է:

Նասալիա.— Քաղցած ու աղքատ մարդիկ հերոս կլինեն,
դու վոչ քաղցած ես և վոչ ել աղքատ, աղաւ:

Ժորժիկ.— (Փանր շեռով) Մենք կիլենք այդ իրավունքը բոլոր քաղցածներին և աղքատներին:

Նասալիա.— Ձեք կարող, տղաս, հարուստը հերոս չի լինի:

Ժորժիկ.— Կարող ենք, կլինի, (բացելով սուրը) հենց այսպես, մեկ, յերկու, յերեք, չորս..... (սկսում է բռնակցել քաղաքներում գտնված ծաղիկների գլուխները) այ, այսպես, այսպես, այսպես, այսպես....

Թամարա.— Մի, Աստված, լավ վոր վարդան Սերգեյիչը աջոգեց մինչև հիմա քեզ թիկունքում պահել, մինչև հիմա սպանվել եիր:

Ժորժիկ.— Յես վախկոտ բանակի հետ չեի գնա ուղիմա՝ ճակատ:(Շարունակում է ծաղիկների ջարդոսումը):

11

Վարդան Սերգեյիչ.— (Մտնում է) Ի՞նչ կա, ի՞նչ է պատահել, Ժորժիկ, տղաս, հանգստացիր, ի՞նչ ես անում:

Նասալիա.— Այ մանրդ, լավ հասար, խելքին բան է պատահել, բժիշկ բերել տանք:

Ժորժիկ.— (Դադարեցնում է կոտորածը):

Վարդան.— (Սուսնց ուռազրույուն գարնեկու Նասալիայի խոսքերին.) Ի՞նչ ես անում, տղաս:

Ժորժիկ.— (Լուրջ) Հերոսություն եմ անում, հայրիկ:

Վարդան.— Հերոսություն, բայց անմեղ ծաղիկները: Ծաղիկները թշնամի:

Ժորժիկ.— Թշնամի են բոլորը, և մարդ, և բույս, և կենդանիներ:

Վարդան.— (Սպասեալ) Մանրդ, բճշա, կենդանիներ:

Թամարա.— Վարդան Սերգեյիչ, մի ուշացնի բժիշկը (լացակումած) Ժորժիկս, Ժորժիկս:

Ամալիա.— Նիկիտան, Նիկիտան...

Վարդան.— (Մամալիայի խոսքից հետո՝ ավելի է ապշանում լեզվ սկսում է վախ զգալ): Բժիշկ կամ քահանա՝ միևնույնն է, միայն թե շտապեցեք:

Նասալիա.— (Մտնելուց հետո լեզվ կանչում) Մաշա, Մաշա:

Վարդան.— Ի՞նչ վոր պատահել է՝ գլխումն է պատահել:

Ժորժիկ.— (Վերադարձված լեզվ լուրջ) Հայրիկ, դու անպատվում ես ինձ:

Վարդան.— Քավ լիցի, տղաս, չեմ անպատվում քեզ:(Մտնելուց հետո Ժորժիկին) Ասա, ինչո՞ւ ես կոտորում ծաղիկները:

Ժորժիկ.— Կասեմ՝ յեթե կարողանաս ինձ հասկանալ:

Վարդան.— (Ձեռով լեզվ Ժորժիկից գաղտնի՝ հեռանալով և անում Թամարային լեզվ Մամալիային հեռանալ զանից):

Ամալիա և թամարա.— (Դուրս):

12

Վարդան.— Յերբ եմ քեզ չհասկացել:

Ժորժիկ.— (Խոր լուրջութից հետո) Պատերազմը շարունակվում է, հայրիկ, և շարունակվում է կատաղի թափով:

Վարդան.— Այո, և յես, իբրև քեզ սիրող հայր, ամեն մի-շոց դործ զրի և աջոգեցի քեզ թիկունքում պահել գնդակներից և թնդանոթներից ազատ:

Նասալիա.—(Ուշի ուշով լսում է արտի վրա նսած, բայց մերք ընդ մերք սրբում է իր քայ ալիքը.)

Ժորժիկ.—Պատերազմին պետք է վերջ տալ—Թշնամու պարտությամբ:

Վարդան.—Յես... յես... տղաս, ողավում եմ պատերազմից, այնպես վոր լավ հազվում ես, ուռում, խմում, քեֆեր ես անում, այդ բոլորը փողով է լինում, պատերազմն է ինձ այդ փողը տալիս: Յեթե կա մեկը, վոր պատերազմի շարունակվելու մեջ շահագրգռված պիտի լինի՝ դա դու ես:

Նասալիա.—Վարդան Սերգեյիչ, բան եմ ասում:

Վարդան.—(Ձեռով նշան է անում—լուր.)

Նասալիա.—Բայց չես խմանում բանը ինչու՞ն է:

Վարդան.—(Ելի ձեռով նշան է անում—լուր.)

Ժորժիկ.—Պետք է վերջ տալ արյունահեղ կռիվներին:

Վարդան.—Բայց ծաղիկները... անմեղ թշնամիներ...

Ժորժիկ.—Վերջ տալու համար ես արձանագրվեցի Մահվան Բատալիոնում:

Վարդան.—(Մի պահ լուռ է յեվ ապա հանկարծակի), Նասալիա, (Վազելով գետի գուռը) Մաշա, Մաշա, բժիշկ հարկավոր չի:

Ժորժիկ.—(Վերացած) Մահվան Բատալիոն...

Վարդան.—Լավ ես արել, տղաս, շատ լավ ես արել, հենց հերոս ես, վոր կաս:

Ժորժիկ.—Հայրիկ, դու ինձ հասկանում ես, հերոսություն: (Փաթաթվում է հորը.)

Վարդան.—Ո՞վ կը հանդգնի ասել, վոր մեր ընտանիքում հերոս չկա:

Ժորժիկ.—Հերոս, հերոս... (Վերացած յեվ քիթը սեկած առասպաղից.)

Նասալիա.—Մի մարդ, բժիշկը քեզ համար է հարկավոր:

Վարդան.—Վոչ վոքիս համար բժիշկ հարկավոր չի, միայն հարկավոր է խելք:

Ժորժիկ.—(Քիթը վառ անելով) Դու ինձ ծաղրում ես, հայրիկ:

Վարդան.—Վոչ, տղաս, խելք է հարկավոր, վոր քեզ հասկանանք:

(Լուրջում)

Ժորժիկ.—Գնում եմ դանելու իմ ընկերներս:

Վարդան.—Գնա, տղաս, մի բաժանվիր քո ընկերներից:

Նասալիա.—(Նրա հետեվից, արցունքոտ ալիքով յեվ հուսահատած, նշում է):

Ժորժիկ.—Մի՛ հուսահատվիր... մայրիկ, շուտով կգամ: (Դուրս):

13

Վարդան.—(Հետեվից) Դուք կը հաղթեք Թշնամուն:

Նասալիա.—Գժվեցիր դու, ա՛յ մարդ:

Վարդան.—Յես չեմ գժվողը:

Նասալիա.—Նա ել:

Վարդան.—Նա ել չի գժվել:

Նասալիա.—Ապա ո՞վ:

Վարդան.—Դու:

Նասալիա.— Դա ել պիտի լսել:

Վարդան.— Այ կին, չես հասկանում, վոր այդ Մահվան Բառալիւոնի համար՝ պատերազմը արդեն վերջ է գտել:

Նասալիա.— Ձեմ հասկանում:

Վարդան.— Ի հարկե չես հասկանա, յեթե հասկանայիր՝ չէիր սպրդնի:

Նասալիա.— Փիլիսոփայություն հարկավոր չի, բան ասա:

Վարդան.— Բան եմ ասում, այ կին, Մահվան Բառալիւոնը մեռածների բառալիւոն է:

Նասալիա.— Ձեմ հասկանում, չեմ հասկանում, չեմ հասկանում:

Վարդան.— Հասկացիր, հասկացիր, հասկացիր, ո՞վ վոր մեռել է, հասկանում ես, ո՞վ վոր վրաժ է, ո՞վ վոր ժորժիկի նման բույսերի դեմ է պատերազմում, նա է գրվում Մահվան Բառալիւոնում: Մայրդեց, ժորժիկ, ուր ել գտավ:

Նասալիա.— Մահվան Բառալիւոնը վճռական կռիվ ցանկացողների բառալիւոն է: (Ձեռնով ցույց տալով) Կորավիմ տղա:

Վարդան.— (Սուսաց ու զաւթնելու կնոջ խոսքերէն) Վա՛յ, վա՛յ, վա՛յ, (Շուրջով քարոված ծաղիկները) Վա՛յ, վա՛յ, վա՛յ, մեր աղի հերոսութեան մի մտիկ տվեք, խեղճ ծաղիկներ, յերբվանից թշնամի եք դուռել մեր հերոս ժորժիկին: Լավ վոր այս սենյակում ավանակներ չկային, յեթե սկսեք ավանակներին ջարդել, Տեր Աստված...

Նասալիա.— Ամեն բան ծաղր ես գցում, այ մարդ:

Վարդան.— (Լուսնուց հետո) Հերոս է, վոր կա:

Նասալիա.— (Բարկացած) Դու ծաղրիր և սպասիր, և ասա թե ինչ է դուռ մեր գլխին:

Վարդան.— Մեր գլխին, վոչինչ ել չի գա, յեկածը յեկել է:

Նասալիա.— Մինչև հիմա ինչ է յեկել:

Վարդան.— Ժորժիկն է յեկել մեր գլխին, ելի՛ ես ուզում:

Նասալիա.— Ախ, ժորժիկ:

Վարդան.— Այսքան վող աշխատեմ պատերազմից և մեր հերոսը ազնեա, վոր պատերազմը վերջ գտնի, թող շարունակվի ալիկի կատաղի թափով: Բոլորդ ել մեռածներ եք, պեաք և անմիջապէս արձանագրվեք Մահվան Բառալիւոնում: Գնում եմ սենյակս մի քիչ հանգստանալու: Ասա խեղճ աղջիկներին, բան չկա, թող հանգստանան: (Գնալ):

Նասալիա.— (Վարձած՝ պսույս և գոծում, ապա մոռնալով գրան՝ կանչում է) Թամար, Ամալիա:

Թամարայ յել Ամալիա.— (Մոտենալով հեռախոսի փայտով):

Նասալիա.— Ձեմ հասկանում թե ինչ պատահեց և ինչ է պատահելու:

Թամար.— Ինչ է ասում Վարդան Սերգեյիչը:

Նասալիա.— Ծաղր և գցում, աղջիկ:

Ամալիա.— Ինչպէս թե ծաղր և գցում:

Նասալիա.— Չը դիտեմ, ասում է՝ վոչինչ չկա, ասաց վոր ձեզ ել ասեմ:

Թամարա.— Յես հալաւապած եմ, վոր նա մարի խանդա-
լում է ունեցել:

Ամալիա.— Նիկիտան ել:

Նասալիա.— Սղասիր, Նիկիտային տես, ապա յեզրակա-
ցրու:

Ամալիա.— Նառալիա Սարգիսովնա, Ժորժիկը, վոր կոր-
սընցուց էր խելքը՝ Նիկիտան ավելի շուտ կկորցնի:

Նասալիա.— Զի կարելի այդպես խոսել...

Թամարա.— Նառալիա Սարգիսովնա, մի հար պետք է ա-
նել, Ժորժիկը միտն է, վոր յես սիրում եմ:

Նասալիա.— Դուք այստեղ սպասեցեք, հիմա Ժորժիկը կը-
գա, յերևի Նիկիտան ել հետը կլինի, աշխատեցեք
ստանաւիրա լինել, տեսնենք ինչ կլինի: (Գուրա):

Ամալիա.— Ստանաւիրա լինել... Թող Նիկիտան գա, յես
նրան սովբեցնեմ Մահվան Բառալիքն:

Թամարա.— Ախ, Ամալիա, մենք յերկուսս ել կորած ենք
(Ընկնում է Ամալիայի գիւղը):

Գրիգ լսվում է արագ քայլերի աղմուկ

15

Ժորժիկ: — (Մտնում է սուրբ մեղացեալ յիվ վագում է դա-
լիճի մեկեկ մեքսեղը իբր քե չտնում է մեկի վրա յիվ սու-
րով կտնում հրա գլուխը):

Թամարա.— (Ամալիայիճ) Յես հալաւապած եմ հիմա, վոր
խեղկաաւիւթյուն է անում:

Ամալիա.— Կարծում ես:

Ժորժիկ.— Ո՛ք, հոգնել եմ...

մարա. Ի՞նչից:

Ժժիկ.— Պատերազմներից, մենք պետք է հաղթենք,
վոր հանդստանանք:

մարա.— (Հեղհեղահան մեղմ ծիծաղ):

Ժժիկ.— Մի ծիծաղիր, Թամարա, դու պետք է ինձ հի-
մա ավելի սիրես:

մարա.— (Լուրջ լիվ խոս) Յես հերոսներ չեմ սիրում,
հիշա ե՛լ յես սիրում եմ զինվորականներին, բայց վոչ
հերոսական տեսակից:

մարա.— Հերոսություն լինելի վրա կը լինի է վոչ
թե մեղի հետ, մենք ազնվական որիորդներ ենք:

Ժժիկ.— (Քարհացնում է սուրբ, ուղղվում է, աչիքը հա-
ռում է առասաղիճ): Հեռու ինձանից ստրկամտու-
թյուն ե... շսկողատ:

16

մարա.— (Ներս է մտնում այն ժամանակ յերժորժիկը Եկա-
լա քառն է արտասանում լիվ լսում է): Շսկողատը
դեռես չեն բերել, պարսն:

Ժժիկ.— Ահ, զարշելի աղջիկ: (Սուրբ ուղղվում է հրան),

մարա.— (Վախի ճիւղով գլորվում է գուրա):

17

մարա.— (Լուրջութից հետո): Յես քեզ հետ պետք է
լուրջ խոսեմ: (Ժորժիկի ձեռքից բռնում լիվ արհուր-
լիվ նսեցնում բազկաքոռի վրա):

Ժժիկ.— Ասա ինչ վոր ուզում ես, բայց մի խանդարի
իմ յերազը:

14456-58

Քամարաւ.— Ամալիա, արի, նստիր մեզ մօտ:

Ամալիա.— Սպասում եմ, վոր Նիկիտան զա, յես ել նրա՝
հետ լուրջ պիտի խոսեմ:

Ժորժիկ.— Նիկիտան հիմա կը գա:

Ամալիա.— (Նստում է հրանց մօտ):

Քամարաւ.— Դու ասում եիր, վոր քո յերազր յես եմ, վոր
քո բոլոր նպատակը յես եմ, յես եի քո ամեն ինչդ:

Ամալիա.— Նիկիտան ասում եր, վոր յես նրա արեն եմ:

Ժորժիկ.— Յես մինչև հիմա ել վաճառով չեմ փութել, քեզ
սիրում եմ, քեզ պաշտում եմ, բայց, բայց, (մօտա-
վում է) բայց թշնամիները, (վոսֆի ե կանգնում) յերես
են առել, շփացել, մենք պետք է հաղթենք նրանց,
մահ, մահ բոլորին:

Քամարաւ.— Ո՛հ, յես ինչ գժի հետ եմ կապել իմ բախար:
(Լաց ե լինում):

Ամալիա.— Թշնամ ենք մենք, Թամարա: (Լալիս է):

Ժորժիկ.— Ափսոս իմ յերազներին: (Լուսբուն): Յես զը-
նում եմ միայն հաղթելու, մի լաց լինիք:

Քամարաւ.— Ո՛վ մտքրեց այդ քո գլխում:

Ժորժիկ.— (Բարկացած) Լաիր, վոչ վոք իմ գլխում վոչինչ
չի մտցրել, այս բոլորը ծնունդ են առնում իմ հո-
գու խորքերից:

Քամարաւ.— Յերբ ասալին անգամ գինվորադրությանդ
կոչը յեկամ լաց եիր լինում, աղաչում եիր հայրի-
կիդ ազատել քեզ գինվորադրությունից:

Ամալիա.— Նիկիտան չէր քնում և զիշերները վախենում
եր փոքոց դուրս գալ:

18

Մաւա.— (Ներս ե մեծում) Պարոն Նիկիտան:

Ժորժիկ.— Ներս հրավիրի՛ր: (Յուր բառում լի գինվորական
բարեգի ե կենում):

Ամալիա.— Նիկիտա, կորած Նիկիտա...

Քամարաւ.— Խիստ վարվիր հետը:

19

Նիկիտա.— (Ներս ե մեծում լի անհեղձ Ժորժիկի գինվորա-
կան բարեգի կանգնելը, ինքն ել սուր բառում է լի բարե-
գում, Լուսբունից հետ՝ առանց բարեգիլու աղջիկներին)
Ժորժիկ, ի՛նչպես ե գինվորում մեր գեղեցիկ սե-
ւը այս մեր սրբազան գործը:

Ժորժիկ.— (Լուրջ) Հանդես են գալիս մարդկային տկա-
րություններ:

Ամալիա.— (Ջղայնացած) Նիկիտա, յես մինչև հիմա չեի
համարաւ, վոր դու այս տեսակ սրբազան հիմարու-
թյուն ես արել, բայց հիմա համարում եմ և ափ-
սոսում իմ այն բոլոր որերիս, վոր քեզ հետ եմ անցկա-
ցրել աղաղայի հուշով, ել չեմ ասում այն անքա-
ղաքավարությունը, վոր մեզ բարեկու մասին չի կա-
րողացար մտածել:

Նիկիտա.— (Խոհարհելով հեզուրեն) Ներողություն եմ խնդ-
րում իմ անքաղաքավարության համար, բայց ինչ
վերաբերում է իմ և մեր հիմարության (գառնալով
Ժորժիկին) վոչ վոք չի հասկանա:

Ժորժիկ.— Վնչ վոր չի հասկանա:

Թամարա.— Այո, վնչ վոր չի հասկանա:

Ժորժիկ.— (Նիկիտային) Գրիշան գալու ե:

Նիկիտա.— Այո, խոստացավ անպայման գալ:

Ժորժիկ.— Ուրեմն այս յերեկո կանչենք գործնական բալլերի:

Նիկիտա.— Այո, հենց այս յերեկո:

Ժորժիկ.— (Վերացած) Մենք զնում ենք զեպի մահ:

Նիկիտա.— Գնում ենք զեպի մահ:

Թամարա.— Ի՞նչ եք ասում:

Ժորժիկ.— (Փափք ցեփեղով) Ասում ենք այն ինչ վոր ասում ենք:

Նիկիտա.— Ասում ենք այն ինչ վոր ասում ենք:

Թամարա.— (Բերնի ծամածուրքունքերով ծագում ե) Ասում ենք այն ինչ վոր ասում ենք, գնանք, Ամալիա:

Ժորժիկ.— Ճանապարհը բաց ե ձեր առջև, Մահվան Բառալիոնում արձանագրվողները թողնում են և հայր և մայր և սիրուններ և ամեն ինչ, գացեք:

Ամալիա.— Նիկիտա, թողնում ես ինձ:

Նիկիտա.— Դուք եք թողնում մեզ:

Ամալիա.— (Զայրացած) Բավական ե: Գնանք, Թամարա:

Թամարա.— Գնանք: (Գնում են արագ լեզ աղմուկ արելով):

20

Ժորժիկ.— Կնոջ սերը չպետք ե խանգարի իմ իդեալներին:

Նիկիտա.— Կնոջ սերը չպետք ե խանգարի ե իմ իդեալներին:

Ժորժիկ.— Մահվան Բառալիոն...

(Ժորժիկ լեզ Նիկիտա զինվորական բարեզ են բռնում սուրբեր բաշխով):

Ժորժիկ.— Այլեւ չեն վերադառնա ե չպետք ե վերադառնան:

Նիկիտա.— Հարբիկիդ իմացրի՛ր, Ժորժիկ:

Ժորժիկ.— Այո:

Նիկիտա.— Ի՞նչ ասաց:

Ժորժիկ.— Սկիզբը չհասկացավ, ի հարկե, բայց հետո, հետո ըմբռնեց ու լոկեց ու լոկեցուց մայրիկին ել:

Նիկիտա.— Յես կարծում եմ, վոր իմ հայրը այդքան չի ել կարողանա լմբանիլ:

Ժորժիկ.— Յեվ... և... չի թողնի քեզ...

Նիկիտա.— Ո՛վ ե մտիկ տալիս հայրերին:

Ժորժիկ.— Մաշն, Մաշն:

21

Մաշն.— (Մահում ե) Այստեղ եմ, պարոն:

Ժորժիկ.— Գրիշան պետք ե գա, առանց գեկուցման ներս հրավիրիր:

Մաշն.— Շատ լավ: (Գալով):

22

Ժորժիկ.— Լսի՛ր, Նիկիտա, յես այսպես եմ ծրագրում մեր կոնֆլիկտը: Նախ՝ արյունահեղ, ճակատ ճակատի և անպայման թնդանովներով:

Նիկիտա.— Յեվ զնդացիքներով:

Ժորժիկ.— Անպայման ծրագրում կը լինի այդ: Ապա՝ պետք ե թշնամին լինի թվով առավել, իսկ մենք՝

քիչ, այսպիսով կռիվը կը լինի չափից դուրս անհասարակ: Նախ՝ զրոհ կը տանք և կը զբաղենք բոլորը:

Նիկիիսա.— Յեվ լեռը և՛ դաշտը, զյուզեր և քաղաքներ:

Ժորժիկ.— Լսի՛ր, մի՛ աճապարիր, այդ բոլորը կը լինին մեր ծրագրում:

Նիկիիսա.— Ձեռ՛ կարողանում ինքզինքս զսպել, արյունս յետում և, ջգերս ավյուներից զոդում են, հուզվում եմ, խելագարվում եմ, կռվի ուրախությունից շնչո՛հեզ՛ եմ լինում, սուտվում ե՛ս սիրաս, ուռչում ե՛ս հոգիս, մի՛աջնում են աչքերս, անկվում են մազերս, խլանում են ախանջներս, պանում են փողերս (Ժորժիկն էլ հեզհեռ վազկոծվում է) Իմ մեջ բարձրանում և հասաղի Աստվածը կռվին, իմ մեջ արթնանում և գազանը,— գայլեր, թշնամիներ, վագրեր...

Ժորժիկ.— Հեյ, դալիս են, պատրաստ:

Նիկիիսա.— Թող՛ զան, շատ՛ զան, շո՛ւտ զան: Կրակեցեք բոլոր թնդանոթներից, կրակեցեք բոլոր ուղղությամբ:

Ժորժիկ.— (Մուրջ Բաշկով) Ո՛ւր եք փախչում, փախչում նստատեղիներ, ի՞նչ եք կորցրել ձեր զրույթները:

Նիկիիսա.— (Մուրջ Բաշկով) Ո՛ւր եք փախչում:

Ժորժիկ.— Հանձնակցե՛ք:

23

Դրիսա.— (Մահում է, բայց մի՛ պահ Ռեյն չեն նկատում):

Նիկիիսա.— Կրակեցեք թնդանոթներից, կրակեցեք անդուլ

և անդադար: Ժորժիկ, մոտ ե՛ հաղթանակը:

Ժորժիկ.— Արդեն հաղթել ենք և հիմա... (Նկատում է Գրիցային յեվ լուռ):

Նիկիիսա.— (Նկատում է Գրիցային):

Դրիսա.— (Փառե՛ր ցեղերով) Յես հիմա հաճատացած եմ, վար Մանվան Բառալիսը վերջ կտա պատերազմին:

Ժորժիկ.— Յես հաճատացի և հետո արձանագրվեցի:

Նիկիիսա.— Յերանի՛ նրանց, վար առանց տեմեխու կը հաճատան:

Դրիսա.— Յերանի՛ մեզ...

Նիկիիսա.— (Առաքյուներից հետո) Մենք այսօր ազատագրվեցինք փուճ բաներից:

Դրիսա.— Ի՞նչ փուճ բաներ:

Նիկիիսա.— Կանայք:

Ժորժիկ.— Հեռացան մեզանից և հարթեցին մեր ճանապարհը դեպի հաղթանակ:

Նիկիիսա.— Դեպի՛ հաղթանակ:

Դրիսա.— Յես վաղուց ձեզ ասում էի կանանց փուճ լինելու մասին և դուք ինձ ծաղրում էիք:

Ժորժիկ.— Հիմա նոր ենք զգում:

Նիկիիսա.— (Մեքենա հառած առասպաղին) Ամալիա՛, Ամալիա՛, դու ելի կը կախվես իմ փեշերից յերբ սուրբ ձեռքիս, հաղթական, կը վերադառնամ ավադաներով և ծափերով:

Դրիսա.— Նիկիիսա, խորհուրդ եմ տալիս քեզ այդ խոսքերն առել աչիս առեն յերբ ամեն ինչ արդեն կատարված կը լինի:

Ժորժիկ. — Ի՞նչը կտտարված կը լինի — հաղթութեամբ:

Գրիգոր. — Հաղթութեամբ, այո՛, հաղթութեամբ:

Ժորժիկ. — (Սեփականի գոռոզութեամբ) Մենք կարող են պարտակել միայն թշուրիմացութեամբ:

Գրիգոր. — (Նկատում է Ժորժիկի ուսից կախված զինվորական բարձր) Մենք, վարձան գիտեմ, գնում ենք կովկասյան ֆրանս, բայց դու կախել ես քո ուսից Չինաստանի քարանդը:

Ժորժիկ. — Ի՞նչ տարբերութեան Մահվան Բառալիոնի ըստ պալի համար — Չինաստան թե Տաճկաստան, չե՞ վոր մենք պիտի անցնենք բոլոր յերկրների վրայով, պիտի անցնենք բոլոր սահմաններով:

Գրիգոր. — Այն ժամանակ ի՞նչ կարիք կա քարանդի:

Նիկիթա. — Դու մոտանում ես ձեռք, Գրիգոր:

Ժորժիկ. — Նախանք:

Նիկիթա. — Ամենաեղանակ:

Գրիգոր. — Նոր հոր եմ անդրադառնում:

Ժորժիկ. — Մտածիր:

(Լուսարկ)

Գրիգոր. — Ժորժիկ, քո Թամարան հեռացավ, հա՛:

Ժորժիկ. — Այո՛:

Նիկիթա. — Ասենք՝ Թամարայից սպասվում եր:

Գրիգոր. — Ամալիայից չե՞ր սպասվում:

Նիկիթա. — Վա՛:

Գրիգոր. — Ավելի վատ:

Նիկիթա. — Լավ կամ վատ՝ միևնույնն է, դեպի՛ արյունահեղ կռիվ:

Ժորժիկ. — (Վազեզեզված՝ սուրբ բառում է պատգամ) Յերդ-վենք մեր սուրերի վրա հանուն իդեալին:

Նիկիթա. — (Սուրբ բառով) Յերդվենք:

Գրիգոր. — (Սուրբ բառով):

24

Մաւաւ. — (Ներս է մտնում յեւ սեպեղան սուրերը սպի մեջ)
Ա՛խ, այս սուրերը: (Վերս է դուրս ելնել):

25

Գրիգոր. — Յերդվենք:

Ժորժիկ. — Յերդվենք մեր պատիվով մեր բոլոր քաջարտութեամբ, մեր բոլոր հերոսական յեռանդով... (Գրիգոր, զաւ մտնելից լսում են, մի՛ն մյուսի հետեւից, աւաճանակի պայքար ենք, Յերդվենք էլ յեղանակ՝ ցրում են զանիքի մեջ յեւ ամեն մեկը բազմում է մի արտի, մի սեպեղան յեւ մի առաւելայի հետեւ, Ժորժիկ ձեռքից բաց է բազմում սուրը, վոր բնկնում է սեպեղանի մեջ):

Մաւաւ. — (Ահ ու յերկուսի հիշեցով՝ ներս է գլխավում, սարսափահար ու բորբալու) Գարններ, ախարակները մեղ պաշարել են, ոչնչութեամբ, ի սեր Աստուծո, ոչնչութեամբ:

Ժորժիկ. — (Նշեցված արտի հետեւը գոգահար) Մի վախենա, Մաւաւ. մենք այստեղ ենք:

Մաւաւ. — Բ՛ար եր դուք, պարտն, ս՛ուր եր:

Նիկիթա. — (Սեպեղանը յսխակացնելով) Մի՛ կորսնցնի, Մա-

շն, քո պաղարյունութիւնը, մենք քեզ կը պաշտպանենք:

Մաւա.— Տէր Աստված, վո՞ր տեղից են խոսում, ո՞ւր են պարսնները:

Ժորժիկ.— (Սքոռի բամակից) Յեթէ սուրս ձեռքիս լինէր... (Յերկարում է սուրբ վերցնելու, բայց չի հասնում յեզ վախոզ հետ է բաշվում):

Մաւա.— Յես կը տամ քո սուրբը: (Մոտենում է առնելու— լսվում է ասեմանակի ելի յերկու պայքում) Ա՛հ, (ճիչ է արձակում յեզ քողնում):

Դրիւա.— Կորած ենք, բայց սիրտս ելի գործում է:

Նիկիսա.— Նահանջը մեծ ուղղապիտութիւնն է:

Ժորժիկ.— (Սքոռի հետեզից) Լուսամուտը շատ բարձր է, մի ցատկիր:

Նիկիսա.— Ավելի լավ է մի տեղս կտորեմ քան ամբողջովին մեռնեմ:

Մաւա.— Մի տեղ լինի յես ել թաղնայեմ: (Տեղ է փնտրում):

Ժորժիկ.— Մի աշխատի միայն քո կյանքը փրկել, կեցի՞ր դրան աջջի, թույլ մի՛ տա ներս մտնեն, մենք այս տեղ ենք, ի՞նչ ես վախենում:

27

(Լսվում է ելի յերկու պայքում)

Վարդան յեզ Նասալիա.— (Խորքի գոնից վազում են հետ):

Ժորժիկ.— (Ս. դաշակաճ) Հայրի՛կ, ավազակներ են:

Վարդան.— Ի՞նչ է պատահել:

Ժորժիկ.— Ավազակներ:

Դրիւա.— Չարագործներ:

Նիկիսա.— Չգիշի արարածներ:

Նասալիա.— Չեմ հասկանում:

Վարդան.— Կով վոր թշնամիներ չեն, տեսնեմ ի՞նչ է, ի՞նչ կա դուքսը (գեպի գուռը):

Նասալիա.— (Քոնելով քեզից յեզ վախեցած) Չեմ թողնի, վոր դուքս դնաս, կ'սպանեն քեզ:

Վարդան.— (Չեռից պրծնելով) Թո՛ղ յես դնամ, յես խոհերոս չեմ: (Մոտենում է գրան, գեմն են յելնում Թամարս յեզ Սմալիա ասեմանակները ձեռքերին, կանգ են առնում լուրջ կեպարանով, Ժորժիկ, Նիկիսա յեզ Դրիւա գուռս են գալիս կամաց-կամաց իրենց քաղաքներից, զլիները կախ յեզ ամօքահար:

28

Թամարս յեզ Սմալիա.— Մահվան Բառալիոնի հերոսներ...



9862

2013

